



ՄԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36^{րդ} ՏԱՐԻ

ՄԱՐԱԹ 17 ՅՈՒՆԻՈՒՄ 1887

ԹԻԻ 3856

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Table with 2 columns: Name and Address/Details. Includes entries like 'ՀՐԱՅՐԱՆ' and 'ՍՊՈՅՆՈՑ'.

ՄԱՍԻՍ

Կը հրատարակուի Կ. Պոլիս, Շաբաթ օր, Հատը 40 փարս.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիս, տարեկան Կէս ոսկի օսմ. Գաւառները 70 դահեկան մէծիւր. Սրտասահման, 15 Փաւսդ.

ԴՐԱՄԸ ԵՒ ԲԱՐԵՐԸ

Առ մատակարարութիւն Սրէտեր և Մասիս: Հասցէ Ղալաթիա, Նորատունկեան - խան Կոստանդնուպոլիս

ՀԱՅԱՍՏԱՆ

Ահա ձեռնառն եկաւ, իրօք Մեր կարծածէն ոչ շատ կանուխ, Եւ բերաւ մեզ իւր ցուրտ դիմօք, Անձրեւ և ձիւն... Գըժողաբո՛ւղիս:

ԵՍ-ԿՈՒԼԱՊ

Ժէոստոյի Բասթիլներու կեդրոնատեղիքն են ի Կ. Պոլիս Գանդուք եղբարց Բրիտանական դեղարանն, Գ. Թէոստոյի Կեդրոնական դեղարանն, և Դեղագործական Մթերանոցն, 33, Մեծ փողոց Կալաթայի: — Փոքրաքանակ կը վաճառու ամեն դեղարանաց մէջ:

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 16 ՅՈՒՆԻՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ

Մինչ Կ. Պոլսոյ Հայերն ցնծութեան արտայայտութիւններով կ'ողջունէին իրենց ազգակցին Մեղքոն Խանի ներկայութիւնն ի Կ. Պոլիս, անդին, հեռուն, Պարսկաստանի մէջ կը վազէր Հայոց արիւնը. սուրն ու հըրացանքը ջարդ ու կոտոր կ'ընէին Հայերն. Լէնկիթիուրի օրերուն մի մանրանկարը կը պատկերանար:

Հայկական կոտորածները տեղի ունեցած են Պարսկական երկու գաւառներու Մինջիվանի եւ Դաւաթի մէջ. Աւաղակապեաներն որ Միւրզա եւ Խան Խաղաղները կրելու չապրութիւնն ալ ունին, անցնելով ի գլուխ սպառազինեալ աւաղակներու կ'ապստակեն Հայոց գիւղերը, կը կոշտակեն զայն, կը ծեծեն, կը վիրաւորեն, կ'սպաննեն Հայերն. առանց խարութեան սեռի եւ տարիքի. Մանրամասնութիւններն աւելի հեռուն կը հրատարակուին:

Դավթի մէջ Հայոց Աւաղակապեանքը մի հիւանդանոց է դարձեր ուր ապաստան կ'որոնեն վիրաւոր, արիւնաթաթախ Հայերն: Աւաղակապեան, Ստեփաննոս եպիսկոպոս Մըխիթարեան, Գեորգի-Գեորգի Ջանքերու կը դիմէ, որպէս զի արդարութիւնն ի գործ դրուի: Արարատականի նահանգին ընդհանուր հրամանատար Ամիր Նիզամ խոստացած է պատժել չարագործներն եւ փոխարինութիւն հատուցանել զրկելոց. — Մեռեալները մեռած են, անպատուեալ կանայք անպատուուած են, այդ վերջացած գործ է: Զարագործներէն երկուքն արդէն ձերբակալուած են եւ սակայն կը վայելեն պաշտպանութիւնն Սաղաթուքի, որ օգնականն է Արարատականի ընդհանուր հրամանատարին եւ դատաւորն այլակրօն ժողովրդոց:

Աւաղակապեան, Ստեփան եպիսկոպոս տեսնելով թէ անհնարին է յաղթահարել ոչ թէ չարագործներուն, այլ նոցա պաշտպան Սաղաթուքին, կը դիմէ ուղղակի Վեհ. Շահին: Ի պատասխանի Հայոց Աւաղակապեան բողոքագրոյն, հետեւեալ հեռագիրը կը ղրկուի նմա, այլակրօն դաւանութեանց նախարար Մուշեղ Գոլթի կողմանէ:

«Նորին Սրբազնութեան Ստեփաննոս մեծ եպիսկոպոսին ամենայն Հայոց Արարատականի, համեմատ ժամանակօք լիցի գերապատուութիւն Ձեր:

«Ձեր Սրբազնութեան շնորհալի գրութիւնն, որ կը վերաբերէր Ղարաբաղի Հայոց Ձեւաբանելու խաներէն կրած նեղութեանց եւ զրկանաց, ստացուեցաւ եւ Նորին Օգոստոսիաւ Կոյսերական ահեղաստատ հրամանաց համաձայն՝ տնօրինեցաւ եւ ուղարկուեցաւ առ գերատաժնան Ամիր Նիզամն ազգու հրամանագիր: Ձերդ Բարձր Սրբազնութիւն, յուսալիլ եղէք միշտ ամենողորմածութիւն Նորին Օգոստոսիաւութեան

Եւ յաւաքեցէ՛ք Հայերն, ինչ եւ որքան կորուստ եւ զրկանք ունեցեր են Հայերն, անոնք իրենց ստանան բաւարարութեամբ եւ յաւաքեցէ՛ք խիստ կերպով կը պատժուին: Սոյն հրամանագիրն ցոյց տուէք Սաղաթուքին, որպէս զի չուտով գործադրուին հրամաններն: Պատասխանը դրաւորապէս դարձեալ կ'ընդունիք թղթատարով:

Արդարեւ, թղթատարով կը հասնին ի Դավթի մէջ Մուշեղ Գոլթի գրաւոր պատասխանը նկատմամբ Աւաղակապեան բողոքանաց: Վեհ. Շահի կողմանէ խիստ հրամաններ և հրահանգներ խրկուած են առ Ամիր Նիզամն և առ այլ ամենայն ձեռնահաս պաշտօնեայս որպէս զի չարագործները չարաչար պատժուին եւ փոխարինութիւն լինի զրկեալ Հայոց: — Սակայն արդիւնքը տակաւին յայտնի չէ:

Ինչ որ ալ լինի արդիւնքն, յայտնի իրողութիւն մը կայ. կոտորածն ընդդէմ Պարսկաստանի Հայոց, սկսած է պարբերական լինել: Անցեալ տարի Քէյվան գաւառի Հայերը կը կոտորուէին, այս տարի կարգն ուրիշ գաւառներու է: «Պ» գիտէ՛ յաջորդ տարին ում է: Անցեալ տարի պարսկական կառավարութիւնը շատ հոգածութիւն ցոյց տուաւ չարագործները պատժելու մասին, նոյն հոգածութիւնն այս տարի եւս կը տեսնուի, բայց վերջապէս ներքի է մտածել թէ կառավարութեան մը պարտականութիւնն այն չէ միայն որ սպասէ թէ ժողովուրդը զնապառն եւ ինքն յետոյ զանոնք խնամէ, մեղապարտները պատժէ: Կառավարութիւն մը Կարմիր-Սաչի ընկերութիւն չէ որուն պարտականութիւնն է վիրաւորեալները դարմանել: Փափաքելի էր որ պարսկական կառավարութիւնն իւր հոգածութիւնն ու աշխրջութիւնը ցոյց տար իւր հըպատակներու կեանքն ու ինչքն ապահովելու մէջ, եւ ոչ միայն յետ հարուածին զանոնք խնամելու:

Մեղքոն Խան քաջ գիտէ թէ՛ որքան տըխուր ապաւորութիւն մը կը թողուն Եւրոպիոյ մէջ այս օրինակ խժոժութիւններու լուրերն եւ որչափ կրնան բարոյապէս վնասել Տէրութեան մը որ կ'ուզէ քաղաքակիրթ կոչուել Մեղքոն Խան քաջ գիտէ թէ՛ իւր ազգայիններուն սիրտն ո՛րքան խոր կը խոցուի, լսելով ամէն տարի այսպիսի սրտաճըմլիկ դէպքերու նկարագիրներ: Հետեւաբար Մեղքոն Խան մատուցանելով Հայոց շնորհակալութիւններն առ պարսկական կառավարութիւն այն հոգածութեան համար զոր նա ցոյց կուտայ ոճրագործները պատժելու եւ Հայոց կորուստներու փոխարէնը տալու մասին, անշուշտ կը հաճի միանգամայն հաղորդել թէ քաղաքակիրթ աշխարհն իրաւունք մը ունի յուսալու թէ պարսկական իշխանութիւնը պէտք է կարող լինի իւր հըպատակները պաշտպանել նախ քան կոտորածն:

ՊՈԼՍԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ

Այս վերնագրին ներքեւ պիտի հրատարակուին մերթ Եւրթ մերթ Պոլսեցի զանազան տիպարներու թերթեւ նկարագրեր :

ՊՏԿԷՆ ԾԱՂԿԱԾԸ

Հաւանորէն պատկէն ծաղկած քառը շատ ընտանի չէ մեր ընթերցողաց : Պոտկէն է ծառին ընծիւղն , այդ գիտէ ամէն ոք : Պաւառներու մէջ պատկէն ծաղկած է կոշտ ու ծառն որ արդէն փառած է , արմատ չունի , բայց վրան ընծիւղ մը կը ծլի : Կը տուէ մը կը բացուի որ թարմ է , անանջ է , բայց վերջապէս բունը փառած է արմատ չունի : Ժողովուրդը նմանութիւն մը դրած է ի մէջ այդ ընծիւղին եւ այն արդուն որ չունի արմատ եւ բուն , բայց յանկարծ կը ծաղկի եւ աղնուական լինելու յաւակնութիւն կ'ունենայ : Այդ պիտի կը կոչուին դաւաճներու մէջ պատկէն ծաղկած : Այսքան բացատրութիւն կը բաւէ ուրեմն , թողունք գաւառներն եւ վերագաւառներ Պոլս , թարգմանելով parvenu բառն պատկէն ծաղկածով :

* * *

Պոտկէն ծաղկածն երեսուն եւ հինգէն քառասուն տարեկան է : մինչեւ երեսուն տարին չէ ունեցած ապահով , շահաւոր դործ մը : մի քանի դործ փոխած է , ամսականը միշտ բիշ : բայց վերջին դործին մէջ բազը , ինչպէս կ'ըսեն , ժպտած է նմա : այդ օրէն բաւական կերպարանափոխ եղած է :

Հանգերծները չինել կուտայ այն դերձակին որուն անունը կը հնչէ ուռուցիկ : Փայլուն , լաւաբէ կոշիկ կը հագնի : Յերեկները Բիշ-պի ճաշարանը կը ճաշէ , եւ դուրսը իւր խոսակցութեան մէջ կ'ըսէ . « Այսօր քիւլը Զարիֆին ինձ ըսաւ թէ . . . »

Կը ընկալի ընդարձակ կանոնաւոր տան մէջ զոր փայլուն կերպով կահաւորած է : Իւր թաղին բարձր ընկերութեան մէջ մուտք ունի , գիշերները շէնք կամ քէլէկ խաղալու կ'երթայ , անջեւէն սպասաւորը , բռնած լապտերը , մէջն երեք մով :

Երբ անուրը կը բերեն , տան հանքմը աչակաքաւ ակնողիքներով նշաններ կուտայ սպասաւորին նախ այն էֆէնտին հրամցընել , եւ օրիորդը կ'ընկերանայ իւր կարգին : Յաջորդ օրն սպասաւորն իրենց սրճարանին մէջ կ'ըսէ . « մեր պղտիկ խանութը . . . էֆէնտին պիտի տան »

Սիրակի ցերեկներն ալ այցելութիւններու կը պտտուի , երբ ազնիւները տուն կուգան , մայրերին կ'ըսէ , կէս-խորհրդաւոր կերպով « այսօր . . . էֆէնտին եկաւ . հարցուց ծառայողներն ինչպէս են աղէկ են , յատուկ բարեւներ կ'ընեմ , ըսաւ : »

Պոտկէն ծաղկածին տան հանքմներն եւ կեղեցի գնացած ժամանակին միւս կիները զանոնք ստալ կ'անցնեն , Խաֆէին քով : Պոտկները չընդաւայած ժամանակ դրամապահակը ձեռքերին կը բռնեն եւ շէլքաօրդ մէծիւ կը ձգեն պիտիներուն մէջ :

Մանթներն հանքմներուն կուգան , էֆէնտին ձանձրացնել չեն ուզեր : Իրենց կաղաչեն որ սա դործը կարգադրէ : — Պատասխան կ'ընդունին թէ՛ կը խօսինք , բայց շատ դործ ունի , շատ բան կ'աղաչեն , իրաւ որ չենք գիտեր թէ կ'ընայ ընել :

Իւր թաղին մէջ յարգ կը վայելէ . ոչ ոք կը նախանձի նմա , ոչ ոք յայտնապէս գէշ բան մը կ'ըսէ անոր համար : Թաղեցոց համարները բացարձակ կերպով կը յայտնուի նոր թաղական Խորհրդայն քննարկութեան օրով : Ընտրութեան ժողովը միաձայնութեամբ կը դնէ նորա անունը ընտրելոյ եւսպատիկ ցանկին մէջ :

Թաղական Խորհրդայն ընտրութեան կիրակի աւուր շաբաթ երեկոյն եւ նոյն կիրակի առաւօտուն , գիւղին հայ սփորիչը , որ միշտ կ'ածիլէ զէֆէնտին , իւր յաճախորդներուն նորա վրայ կը խօսի : Յաճախորդին երեսները լաւ մի օճաւելէ վերջ , երբ մէկ երեսը կ'սկսի անկել , կ'ըսէ թուրքերէն . « Իրաւ որ . . . էֆէնտին (անխոստան անունը տալով) սա . . . էֆէնտին (Պոտկէն ծաղկածին անունը տալով) ինչ ալ աղէկ առաջ գնաց , աշխարհքս տանկ է . ինչ էր ինչ եղաւ , բայց իրտակն ըսելով արժանի ալ է , անանկ չէ » : Միւս երեսն անկելով ժամանակ կը խօսի անոր անցեալի մասին , քաջա՛ նեղութիւններուն վրայ , տա՛րի նստած փոքրիկ տանը վրայ : — Այս միջոցին անկելն կ'սկսի կը հասնի , յաճախորդը կ'ըսէ թէ՛ ուշադրութիւն ընէ : Ստիպել ստիպել կը լսէ , վասն զի դործողութիւնը վտանգաւոր է : Բայց ամէն ինչ կ'աւարտի եւ ստիպելը կոնքն յաճախորդին տալով երբ կ'սկսի երեսները լսալ , այն ատեն հանգիստ կը խօսի :

— Քուէդ որի՞ պիտի տաս , կ'ըսէ , եւ (Պոտկէն ծաղկածին) անունը տալով կ'առաջարկէ որ քուէն անոր տայ :

Այս արարողութիւնը կը կրկնուի շաբաթ երեկոյն եւ կիրակի առաւօտուն ամէն անգամ իրենց համար :

Նոյն օրը տեղի կ'ունենայ Թաղական Խորհրդայն ընտրութիւնը : . . . էֆէնտին (Պոտկէն ծաղկածը) կ'ընտրուի ստուար մեծամասնութեամբ : միւսներն համեմատականի կը մնան :

Թաղական Խորհրդայն ամենէն շատ աշխատողն է : խզի մտքը կ'աշխատի . զրամական դործողութիւններու մէջ արժանացած է ամենուն փոխաւթեմբ :

Խթութին իրիկունը կը ջանայ չուտ տալու զործը . արդէնքեր կ'ըլլան , բայց վերջապէս ժամն ինչին կ'աղաղտի : Կտուք մը կը բռնէ , սակարկութիւն չ'ըներ , ժամանակ չունի , կը հրամայէ . չուտ ընթանալ : Կտուքին մէջ անհանգիստ է . երկու ձեռքերը ծանկերուն վրայ անհամբեր կ'սպասէ հասնելու :

Գիւղն հասնելուն , չուտ , հինգ վայրկեանի մէջ կ'ածիլուի ձեւ եկեղեցի կ'երթայ : Ատենին կը հասնի պիտի պաշտօնէն : Համար : Եկեղեցոյ պիտին ինք կը պաշտօնցունէ :

Նոյն գիշերը գիւղին տուններուն մէջ ճաշի ժամանակ կը խօսուի թէ Եկեղեցոյն թաղալով . . . էֆէնտին պաշտօնց . լեւի լեցուն էր : Նաեւ կ'ըսեն թէ 2000 հօրայ խաղաղին գրուած էր , իւր անունն ամենէն առաջ կարդացուեցաւ :

. . . էֆէնտին տարիքը գիւղին ընդհանուր մտաւորութեան տարրային է : Ոմանք կ'ըսեն թէ քառասունն անցած է :

— Տէր ողորմա՛ , Տէր ողորմա՛ , կը պատասխանեն աղիկ ունեցող մայրերն : Երեսուն — երեսուն երկու տարեան հազիւ կայ , գեւ երէկուան տղան է :

Քառասուն երկու տարեան կը կարգուի . քսան տարեկան աղիկ մը կ'առնէ ուրիշ գիւղէ :

— Տէր ողորմա՛ , Տէր ողորմա՛ , կ'ըսեն աղիկ ունեցող նոյն մայրերն . յիսուն տարեկան մարդուն ալ տասն եւ ութ տարեկան աղիկ տալը լուրձ բան չէր :

Ամուսնան սէն վերջ ընչ մը երեսէ կ'իյնայ . թաղին մէջ հակառակութիւնը կ'սկսի . մէկուն մէկային հետ կը սրդողին : Յաջորդ թաղականին մէջ չընտրուիր : Ամուսն գիւղացի հայութեան կ'երթայ . ձմեռն այլ եւս այն գիւղը չգար . կը փոխադրուի գրեթէ ինքնակամ գիւղը :

ՀՐԱԶԴԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պ. Այոյանֆ , մին Պոլսի միւս արմատական պետերէն , ուղած է առ Փարս պարս Զօրավարն հետեւեալ նամակը , զոր հրատարակած է սուսական տաք գրութիւններէ մը : Այդ նամակով Պ. Այոյանֆ թարգման կը հանդիսանայ Պոլսի միւս քաղաքացիներէն : Երբ թուի թէ Ռուսերն սկսած են ըմբռնել թէ պէտք է ի հաշիւ տանու այդ պատգամներն : Սեր այս աւուր Օրդէ բաժնին ներքեւ կը հրատարակեն Նախնի Վրէժի , Բեդրաստիկի կառավարական թերթին մէկ յօդուածի ամփոփումն . այդ յօդուածը բացառիկ կարեւորութիւն մը ունի ներկայ պարագային մէջ եւ կարելի է ասել թէ այդ յօդուածի մեկնութիւնը պէտք է փնտռել Պ. Այոյանֆի այս նամակին մէջ :

Զ. ՍԴՈՅԱՆՈՎԻ ՆԱՄԱԿԸ

« Պ. Զօրավար Քաղաքացի ,

« Ներքեցէ վեհանաճարար , որ ձեզ ուղեւ երկրորդ նամակիս մէջ փոքր ինչ չափազանց պարսաւեցի զձեզ , ես կը վարուիմ այնպէս որպէս կը ներգործեն իմ վրայ արտաքին հանդամանքները : Մարդս ծանր եւ անտանելի պայտան կ'ենթարկի երբ ի նկատ կ'առնու ձեր հայրենիքի մասին : երբ կը տեսնէ որ Մահադէպի Վերահաշի , աղաւտական Նախնի , Նախնի Վրէժի եւ այլ սուսական լրագրեր կը մկրտեն մեր կառավարութիւնն , « անվարտ Պաղեստինականներ » , « յիմարամիտներ » եւ այլ անուր հայհայտութիւններով զորս մեզ մօտ խանութպաններն խկ չեն գործածեր . . . »

« Բուք , Զօրավար , ըսիք որ աղաչյին մեծ ժողովի ընտրութիւններն ու եւ նշանակութիւն չունին ձեր կառավարութեան աչքին , նոյն ըստ եւ ձեր վառնային հիւպատոսն : Կարելի է , Զօրավար , ձեր սահմանադրութիւնը կը թղլաղրէ որ ամեն անհայտ անձն րեկանէ կամ մերժէ օրինաւոր ընտրութիւն մը , բայց մեզ մօտ , այդպէս չէ՛ դժարաւարար : Մեզ մօտ ոչ միայն ու եւ է հիւպատոս , այլ մինչեւ խկ կեղբոնական կառավարութիւնը , չհամարձակիր խառնուիլ այդ խնդրին : Մեզ մօտ կ'ընտրուին մասնախումբեր . եւ օրինաց ու իրաւանց հիման վրայ կ'որոշուի թէ արդեօք իրաւացի թէ անիրաւ է ընտրութիւնն : Զօրավար , ինչպէս է որ չգիտէք այսպիսի տարրական ճանապարհներ մը մանուաղ-Դուք որ « օրէնքով » եւ « կանոնով » կը պաշտպանուիք : Արդ ինչպէ՛ս համարձակեցաք յայտարարել այդպիսի անմոռութիւն մը :

«Զօրավար, թոյլ տուէ՛ք հարցնել ձեզ, օրինաւոր է՞ր օգոստոս 9 գործողութիւնն: Զեր օրինաց ո՞ր յօդուածը կարող է արգարացնել զայն... Ենթադրենք որ ապօրինի է խնամակալութիւնն և «աւագակաց խմբակ» մ'է՞ նա, որպէս կ'անուանէ ձեր սիրելի հայրենակիցն Պ. Քաղաքով: Բայց ինչպէ՞ս ձեր գործակալները պատրաստելով իշխանի արտաքսութիւն, չհաղորդեցին թէ տէրութիւն մը կարող չէ անգլուխ մնալ և թէ պէտք է բանով մը լեցնել այդ դատարկութիւնն, ըսենք թէ խնամակալութեամբ: Իսկ եթէ ապօրինի է խնամակալութիւնն, արդ ի՞նչ դեղ պէտք է գործածել այդ չարեաց դէմ: Ըստ իս պէտք էր կազմել Ազգային մեծ ժողովը, որ ունի միակ իրաւունքն և իշխանութիւնն ամեն ինչ ընելու: Բայց դուք ասոր ալ հակառակեցաք: Ուսուցէ՛ք մեզ դատարկամիտներու, ինչպէ՞ս պէտք է հաշտեցնել իրարու այս հակասութիւնն: Զեր կամքը, ձեր խիզճն անարդար և անմաքուր է, Զօրավար: և ձեր խորհուրդներու բարեմտութեան հաւատ ընծայելն անմտութիւն է:»

«Դուք կ'ըսէք թէ «յաւել» է պաշտօնէն իջնել: Ոչ անկարելի է այդ: Մեր «պաշտօնական-թագաւորն» երբեք չուզեր որ աս ունի կոխուրն ու եւ է երկրի օրէնքները և սորա ապացոյցները կամ: 1881ին ձեր երկու հայրենակիցներն, Սոփիայի հիւսիս-ստան Ուրբուքով և Էրնրոդ գօրավարն կը պատէին գիւղէ գիւղ և կը հաւատացնէին թէ Զարը կ'ուզէ յեղոթիւթութիւն ընել Շիշեփուպի մէջ: Պուլլարները մտիկ ըրին, սակայն յետոյ խնայուեցաւ թէ Զարը բնաւ ուզած չէր այդպիսի բան: և թէ՛ Էրնրոդ և Ուրբուքով ստած էին պարզապէս 1883ին ձեր հիւսիստան կը շրջագայէր գիւղերն, միջիններ կը կազմէր ի նպաստ Միութեան որ մինչեւ իսկ Ռուսիէ բառն շատ խորթ ու հակառակ կը թուի կայսեր սկանչին: Պուլլարները հնազանդեցան և գործադրեցին Միութիւնը: Յետոյ երեւցաւ որ հիւսիստանը ստած էր: Աչքիս առաջ ունենալով այս փաստերն, համարձակութիւն կուտամ ինձ ըսելու որ նմանապէս և դուք, Զօրավար, սխալ ըմբռնած լինելու էիք կայսեր կամքը և Սորոքիի, Ուրբուքովի, և Էրնրոդի պէս դուք եւս ըսիք այն ինչ որ սուտ է, ինչ որ անձիշդ է: Շատ իսկ չարչարուեցանք այդ պատուիրակներու երեսէն:»

«Պիտի ըսեմ ձեզ և հետեւեալն: Զարի կ'ուզէ, Կաթիլ, Կաթիլ, Կաթիլ ենթադրենք որ այս ամենն յարգելի են մեր համար, բայց ինչ պիտի ընէ մարդս երբ կը տեսնէ որ այդ կ'ուզէ ու փափաքը հակառակ են ազատութեան, հակառակ են ազգային սրբազան անկախութեան: Եւ, այն ժամանակ այս երկու ներհակ հանգամանքներն ո՞ր մէկը նախընտիր պիտի համարէ նա: Գէթ, ես նախընտիր կը համարիմ պաշտօնական մնալ ազգային անկախութեան սկզբունքին, որ աւելի տեսական և հաստատուն ժառանգութիւն մ'է՛ ազգերու համար, որպէս վկայ է նոյն իսկ Յիսուս Քրիստոս: Եթէ ոչ, երեւակայեցէ՛ք, Զօրավար, որ փողն կամ միւս օր Աստուած մի արտացէ՛ն կայս: Վեհափառութիւն, որպէս մահկանացու առ յաւիտ փակէ իւր աչքերն, այն ժամանակ նորա յաջորդն, դարձեալ որպէս սովորական մարդ կարող է պարտաւել հանգուցեալի այս արարքն: Այս կոչէ զձեզ, Զօրավար, ու ըսէ: «Կրկին անգամ գնացէ՛ք Պուլլարի և յայտարարեցէ՛ք Պուլլարացի թէ՛ ի՞նչ է որ նորա վերընտրեն Պաղեստինի և ըսէ՛ք նմանապէս որ այսու-

հետեւ թոյլ չտան ուրիշին խառնաւել իրենց գործոց»: Այն ժամանակ, Զօրավար, միթէ դարձեալ մենք պարտաւոր չպիտի լինինք կրկին օգոստոսի 9: Իսկ այս կերպիւ Պուլլարի աշխատեալ պիտի պարտաւորի դառնալ քոմիտիներական գրասենեակի Զարերու օրէնքները կատարելու համար:»

«Դուք, Զօրավար, չճանաչեցիք Պուլլար ժողովուրդը, դուք հաւատացած էիք թէ նորա առաջ երեւալուն ու զինուորական հրամաններ արձակելուն պէս, այլ եւս նա ձեր հիւս ծառան պիտի դառնար: Դառն ինքն, Սոփիայէն մինչեւ Վառնա, պէտք է որ հակառակ համազում գոյացնէր ձեր մէջ, այսինքն թէ այս ժողովուրդն միայն դո՛ւ չի լինիր կ'ուզէ և օրթոքութեամբ սակայն դուք կարող էիք ունենալ ահագին յաջողութիւն եթէ միայն զիտնայիք գործել ինչպէս որ հարկն է: Դուք պէտք էիք ուսումնասիրել թէ՛ այս ժողովուրդեան ձգտումն և փափաքն և թէ՛ այն անձերն որոնք կը հաւատայ ժողովուրդն: Զեր դիւանագիտութիւնն և Դուք միշտ կը գրգռէք գիւղական հասարակութեան կոշտ դժուարեաններն, կը հաւատացնէք թէ՛ ուսումնական կայսրն չճանաչեալներ մեծ տուրքերով, թէ՛ նա կը բաշխէ ուսուցիչներ և այլն: այլ դուք կը սխալիք չափազանց: Պատմութիւնը ցոյց կուտայ թէ միայն մի քանի մարդիկ էին, որ երկրին մէջ դարձեալ դառն համարուելով, կ'առաջնորդէին ազգերն, այժմ եւս և միշտ նոքա են և պիտի լինին ազգերու տաղանթներն: Առանց այդ ընտրեալ մարդոց, իւրաքանչիւր ազգ կը դառնայ անասնոց երամակ մը, որպէս դուք բացարձակօրէն կը փափաքէք: Դուք պարտ էիք ամենէ առաջ դիմել այդ ներկայացուցիչներուն: Եթէ ըսէինք նոցա թէ Պուլլարի ազատութիւնն անձեռնմխելի պիտի մնայ, թէ այս պարագային Ռուսիոյ կամքն է որ Պաղեստինի, յիւրաքանչիւր կամ անհրաժեշտ Ռուսիոյ կողմէն նախատուէն յետոյ, անկարող է ընտրուիլ երկրորդ անգամ եւ: Եւ, այն ժամանակ, կը հաւատացնեմ ձեզ, որ ձեզ պիտի հետեւէին բոլոր պատուաւորներն ու հայրենասէրներն: Իսկ դուք, դուք ո՞ւմ հետ յարաբերութիւն ունեցաք, ո՞ւմ հետ տեսակցեցաք: Դուք յարաբերութիւն ունեցաք և ձեր գործերը տեսաք այն պուլլարական միաստակար ու ապականեալ տարրերու հետ, որ կը հարուածեն ժողովուրդն քարերով: Դուք Ռուսաճուզի մէջ, Զօրավար, ձեր սիրտը բացէք այնպիսի մարդոց առաջ, որոնք հայեացքներու և Պուլլարացի մեծամասնութեան հայեացքներու միջեւ կայ ահագին տարբերութիւն: Օրինակի համար այդ անձերէն մին աւելի կը փափաքի ուսումնական գրաւման, որովհետեւ նա իւր խառնութի մէջ ունի մեծ քանակութեամբ հին թէյ: Իսկ ինչ կը վերաբերի միւս անձին, նա իւր ժամանակը կ'անցունէր չոր հացով և ունէր բոլորովին պատառաւուն վերաբերում, սակայն, որպէս նահանգապետական քարտուղար, Աննայի պատուանշանը վզին, երբ կատարուի ուսումնական գրաւման, գինքն գոնէ պիտի նշանակեն փոխ-նահանգապետ: Զօրավար, այս կերպիւ ազգեցութիւն չահել կարելի չէ: Ընդհակառակը, դուք կ'ըսուանէք, կ'ոչնչացնէք և այն զոր ստացած է պատմութիւնը: Զօրաւոր էք, կարող էք գրաւել Պուլլարի և տիրել մեզ: Սակայն հարկ չէ՞ մատնացոյց ընել ձեզ զհեհաւան:»

Զեր դիւանագիտութիւնը կը սիրէ իւր ծանուցագրերու մէջ պնդել թէ՛ ընտրու-

թիւները բռնութեամբ կատարուած են: սակայն իրաւացի է այս, անկեղծ է այս: Անցեալ տարի ձեր գործակալները Ռուսիայի մէջ սպանեցին Սերպեզովը և մեր սիրելի բարեկամ Անկել Բահանայն: Այս տարի եւս ձեր գործակալներն նորէն շատ անգամներ Դուսնեցի, Տրոյեանի և Սոփիայի մէջ փորձ փորձեցին մեքենայութիւն սարքել ընտրողաց դէմ: Յայտնի է թէ ի Դուսնից զոհ ընկան մեր երկու պատգամաւորներն, նոցա վրայ յարձակեցան մի քանի մակեդոնացիներ, մենք կը ճանաչէինք այս վերջին մարդիկն, եւ գրաւ կը բռնէինք, որ եթէ ձեր նոր ուսուցիչները չլինէին, այն ժամանակ խեղճ աւագակները բնաւ չպիտի համարձակէին այսպիսի գնդանութիւն ի գործ: Գնել օրը ցերեկէն՝ և այն եւս ընտրութեանց պահուն: Թող մեզք ձեր հոգւոյ վրայ ծանոթանաին: Իսկ ի Սոփիա ընտրողներու վրայ յարձակող խմբակն ո՞ր տեղէն դուրս ելաւ: Զեր հիւս պատուաւորէն չէ՞ր եւ այնպէս չէ՞ր որ լաւ լը օգի խնայեցաք էին նա:»

Շատ անգամ կ'ըսէիք, թէ պէտք է տալաւին երկարագեղ ընտրութիւնն, որովհետեւ դեռ եւս պատրաստ չէ իշխանական գահի ընտրելին: Շատ բարի, բայց եթէ այդպէս է, առաւ որեւին ինչո՞ւ չտալեցիք արտաքսել նախկին իշխանն: . . . միթէ չգիտէիք որ իւրաքանչիւր օրինաւոր եւ կառավարական պատի արտաքսութիւն յետոյ կը հետեւի անօրինաւոր կառավարութիւն: Ինչո՞ւ, դուք փոխակալ ուրախաճալու ձեր ջանքերու յաջողութեան համար, կը գրգռէիք եւ թոյն կ'արձակէք ընդդէմ նոր կառավարութեան, բանի որ այդ կառավարութիւնն ձեր աշխատութեան արդարեւ է: Ե՞րբ կը փափաքէք որ Պուլլարի գեղավորները լինին Զանքով եւ Ալեմեա: Հաւատացէ՛ք ինձ, Զօրավար, որ այդ երկու անձնք կարող են կառավարել Պուլլարի այն ժամանակ միայն, երբ այս Պուլլարի գրաւում լինի օտար զօրքերու 300,000 սուրիներէ: Այլապէս անկարելի է:

«Ոչ, ոչ, Զօրավար, մենք կը հասկանանք ձեր պատգամաւորութիւնը և օգոստոս 9ի յեղոթիւթութիւնը: Դուք կ'ուզէք ապացուցանել համայն աշխարհի, թէ Պուլլարներն անասուններ են, որ որ եւ է արժէք չեն տար իրենց իրաւունց եւ կը փափաքին ընդունել ինքնակալ Զարի հպտակութիւնը: Զեր բոլոր բրորայնական, քաղաքէ քաղաք պտտած ժամանակ, ձեր բոլոր զայրոյթ, մեր հայրենասէր կառավարութեան դէմ, նպատակ ունէին հարկադրել Պուլլար ժողովուրդն երես դարձնելու այդ կառավարութիւնէն եւ ծունղի դալու ձեր անձնաւորութեան տաճը:»

Անթադրենք թէ այն ժամանակ ինչ հեռագիրը դրկած լինելու էք Բեդրասուրի: «Պուլլարներն ծունղի եկան իմ առաջ, ջերմապէս գոչելով: Կեցցէ՛ Ռուսիա եւ նորա կայսրն, Անկելն աւագակ խնամակալներն:» Եւ ստացած լինելու էք այսպիսի պատասխան: «Շնորհակալ եմ, Զօրավար: Յայտնեցէ՛ք մեզ հաւատարիմ Պուլլար ժողովուրդին, թէ շատ սիրելի է նա մեր սրտին: Դուք արժանաւորութիւն ցոյց կուտաք կ'առաջարկուի լինելու, Անթադրենք թէ տիրողութիւն, եւ պիտի վարձատրուիք Ս. Աննայի պատուանշանով:»

Թերեւս անհաճոյ է ըսել ձեզ այս մասին: Իսկ ինձ համար կրկնապատիկ աւելի անհաճոյ է, որովհետեւ դուք միմիայն կ'երեւակայէք Աննայի խաչն ձեր վզին ունենալու, մինչդեռ ես, որ այս հայրենեաց դաւալին եմ, հայրենեաց օրի համար անթիւ

չարչարանք քաշեցի, հարկեր անգամ աւելի
իրաւունք ունիմ խօսելու քան դուք: Եթէ
ձեզ կ'ապասէ պատուանշանն Պուլլար ազգի
անկախութեան ոչնչացման համար, ինձ
ընդհակառակն կ'սպասէ թշնամոյն կախա-
ղանը կամ Սիպերիա:

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Գործածուած մուշտակներու փաստը. — Ծագելն
ի Կ. Պոլիս: — Մեղիկով թունաւորմունք. — Բժշկու-
թիւնն ի Լոնտոն:

Հանրածանօթ իրողութիւն մ'է այլ եւս
թէ թորախորդ փոխանցիկ է այն փոքրիկ
արարածներու միջոցաւ՝ որոնք Բէրլին յոր-
ջորջուեցան, և գերմանացի գիտնոյն անու-
նը տիրուղս տրուելով անոնց, Քոխեան Բէ-
րլինի կողմէն: Անցեալ տարի, Բժշկա-
կան Դպրոցին լրագրին մէջ հրատարակեալ
յօդուածով մը՝ որ Մաշի մէջ ալ լոյս տե-
սաւ, այս միբրոպներուն փոխանցման գըլ-
խաւոր միջոցներուն վրայ խօսելով, գլխա-
ւորաբար հիւանդին թորը, քրտինքը, շնչա-
տրած օդը նշանակած է ի իրեւ պատճառ
նոյն փոխանցման: Արդ բաւական ժամա-
նակէ ի վեր գիտեցի թէ զգեստներն ալ կա-
րեւոր դեր մը ունին այս գործին մէջ: Ար-
դէն ժողովրդեան մէջ տարածուած անը-
պաստ գաղափար մը կայ այն զգեստուց
համար որոնք աճուրդի հանուած են, ըստ
որում թորախտաւոր մարդոց զգեստները
կրնան նոյն ախտը փոխադրել այլոց: Սոյն
զգեստուց մէջ առաջին կարգը կը բռնեն
մուշտակներն որոնք միշտ կ'առկած ելի աչքով
դիտուած են: Ես տեսայ մի քանի հիւ-
ւանդներ՝ որոնց ընտանեաց մէջ բնաւ թո-
քախտ չկար և որոնք սոյն կարգի յաճուրդ
հանուած մուշտակներ գնելով և հագնելով
թորախտ ունեցան: Ի հարկէ մաթեմատի-
քական ճշդութիւն մը չենք կրնար նշանա-
կել այս տեսակ փոխանցման մէջ, սակայն
անուրանալի է որ հաւանականութիւնը
խիստ մեծ է: Արեւելքի թորախտաւոր հի-
ւանդ մը կուգար ինձ, միշտ մուշտակաւոր
մեկնոցին օձիքը վեր առած և բերանը
զրեթէ գոցած: Կը մտածէի ինքնիրենս այս
հիւանդը տեսնելով. քանի որ թորախտա-
ւորի մը շնչատրած օդին մէջ միբրոպներ
կան որպէս ասպնոցացած են գերմանացի
հեղինակը, և քանի որ մուշտակին տաքու-
թիւնն և ծալքերն ամեն կերպով նպաստա-
ւոր ընդունարան մ'են անոնց համար, ան-
պատճառ այս մուշտակն աղետաբեր պիտի
լինի անոր՝ որ յանգէտս պիտի գտնուէ առ
յսպայս նոյն մուշտակը: Աստի գաղտնիկ
իմացուցի հիւանդին մերձաւոր ազգականի
մը որ մարդուն մեռնելէն ետքն այրեն այդ
մուշտակն, և ծծումբ ծխեն միւս զգես-
տուց: Այս օրինակը կարծեմ բաւական է
ուշաբերել նոյն պարագայից մէջ գտնուող
անձինքը, եթէ անոնք կ'ուզեն որ ահաբե-
հիւանդութեան ուրիշ զոհեր ճարակ չլինին:

Առողջապահութեան խնդիր մ'ալ կը յա-
րուցուի այս օրեր քաղաքական լրագրաց
մէջ ծաղիկ պատճառաւ որ Կ. Պոլսոյ քանի
մը արուարձանաց մէջ յամրելից կը տա-
րածուի Պաշտօնակից մը ինձ ըսաւ թէ ձի-

պալիէ և Ֆէնէրէ զատ՝ որոնք զխաւարա-
բար նշանակուած են Տօթ. Վիօլիէ և Ժոր-
ժիատէսի կողմէն, Չէնկէ-գիւղ և շրջակայ
մի քանի գիւղեր ալ ծաղիկ գէպքեր տես-
նուիլ սկսած է: Այսպիսի պարագայից մէջ
պէտք է նախ հեռանալ փոխանցման կեդ-
րոններէն, փասն որոյ չյղել մանկտին դպրոց
կամ այն տուններ ուր հիւանդութիւնը տես-
նուած է. երկրորդ, պէտք է վաղ ընդ փոյթ
պատուաւորել և կրկնապատուաւորել տալ ա-
մեն մարդ անխտիր: Յաւալի իրողութիւն
մ'է ի Պոլիս, որ դեռ շատ մատղաշ եակներ
կը տեսնուին ծաղիկէ ծակտեսալ դէմքերով:
Այս բան աւելի յաճախ կը տեսնուի մեր
թորը հայրենակցաց մէջ, հակառակ բուն
ջանից Կոյս. կառավարութեան: Շատ լաւ կը
լինի որ տաճկադէտ հեղինակ մը թուրքերէնի
թարգմանէ Տօթ. Փէշտիմաճեան էֆ.ի հո-
յակապ գործն՝ յորում արժանաւոր պատ-
մութիւնն ստորագրուած է Եղուարդ ձէ-
նըրի մեծագոյն գիւտին:

Հանրային առողջարանութեան ետք, ան-
հատական առողջարանութեան դասնանք
վերստին: Զարմանալի զուգադիպութիւն
մը ինձ կը գրգէ կարեւորութիւն տալ այս
խնդրոյն:

Զուգեկի կենդանիներէն մին ալ ոչին է,
որուն տեսքը դարձանք կ'ազգէ մարդուս:
Ոչին տեսակ մ'ունի որ մարմնոյ թաւ մա-
զերով չըմպաւորուած տեղերը կը գոյանայ
և Բէրլին այսինքն հաւորիլ (թափուգ պիթի)
կ'ըսուի: Առողջ մարդ մը՝ որ գիտուածով
ունեցեր է այս զագիր կենդանին իւր վրայ,
դեղագործի մը երթալով, առատօրէն սնն-
դիկի սպեղանի կը գնէ և ամբողջովին կը
քսէ մարմնոյն վրայ: Քանի մ'օրէն ետք կը
թոնաւորուի սեղիկով և բերանը ցաւիլ,
լորձուք վազել, տաքութիւն և փորհարու-
թիւն կ'ունենայ:

Ուրիշ հիւանդ մը՝ որ տարբեր հիւան-
դութիւն մը ունէր, բժշկի մը դեղագործով
նոյն սպեղանին կ'առնուէ մարմնոյ մի մասին
վրայ քսելու համար: քանի մը օր գործածե-
լէ ետք, այնպիսի սաստկութեամբ կը թու-
նաւորուի որ մարմինը ամբողջ գուրս կու-
տայ, վերքերով կը ծածկուի, ձեռքերը դո-
ղալ և ոտքերն ուռնալ կը սկսին: Հիւանդը
կը ցնորի գիշերները: Խիստ փառնաւոր
վիճակ մ'ունէր, երբ ժամանակին հասայ և
պէտք եղած գործունեան ի գործ դնելով
մահուան փառնէն ազատեցի:

Պէտք է ուրեմն որ այսպիսի թունաւոր
նիւթերն ոչ դեղագործները տան առանց
դեղագործի և ոչ հիւանդներն առնուն առանց
բժշկի խորհուրդ հարցնելու: Եւ բժիշկներն
ալ պէտք է հիւանդին առանձնայատկու-
թիւնը չօշափելով գրեն և ոչ թէ այնպիսի
ահագին քանակութեամբ, որպէս ըրած էր
վերոյիշեալը:

Մերթ ընդ մերթ կը կարդացուի լրա-
գրաց մէջ թէ Պետական Խորհուրդը նոր
ծրագիր մը խմբագրելու վրայ է խաբէրոյ
բժշկութեան առջեւ առնուէ համար: Այս
մասին շնորհակալ պէտք է ըլլա՞նք Կոյս.
կառավարութեան հոգատարութեան հա-
մար, և եւս առաւել երախտապարտ կը
կը մնանք եթէ գործադրելի ծրագիր մը ե-
րեւան ելնէր: սակայն գիտնալու ենք որ
միայն ի Կ. Պոլիս չէ տարածուած այս ախ-
տը, այլ ուրիշ եւրոպական մեծ քաղաքնե-
րու մէջ ալ կը տեսնուի, որպէս ի Լոնտոն:

Արեւ. Բէրլին կը գրէ իւր վերջին թիւերէն
միայն մէջ թէ սուտ-բժիշկներ կը վստա-
ի Լոնտոն և թէ բժշկութիւնը փոխանա-
լաւագոյն ուսումնասիրութեամբ մը բար-
ձրանալու հետեւեալ փաստարկ վիճակի մը
մէջ կ'իյնայ յԱնգլիա: Լոնտոնայի բժշկակա
դպրոցը գրեթէ անկանոն վիճակի մը մէջ է
կան շատեր որոնք դիւրութեամբ կրնան քա-
նի մը տարիներու մէջ վկայագիր մը կր
գել անկէ: Այս մ'կաշխատին նոր օրէնքով մ
կազմակերպել զայս դպրոց, սակայն դեռ չ
որոշուած թէ ինչ տիտղոյ տալու է նո
կարգի բժշկաց: Այսու կը տեսնուի թ
աշխարհէս կարգ ու կանոն սորվեցնել յա
ւանալ ազգ մը դեռ չունի կանոնաւորա
պէս կազմակերպութեամբ համարարա
մը: Ինչ ներհակութիւնք . . .

ՏՕԳԹ. Ռ. ՌՕՊԵՆՍՈՆ

ԿՈՏՈՐԱԾ ՊԱՐՍԿԱԶԱՅՈՑ

Հագիւ թէ մի քանի ամիս առաջ վերջ
նագէս կարդադրուած էին այն գործեր
որք կը վերաբերէին Քէյփանի գաւառի
անցեալ տարուան հարստահարութեանց
անձա՝ նոր թշուառութիւններ տեղացին Հա
յոց գլխուն:

Չեղբեանու չարագործներ, Ահմատ խաւ
Մահմադ խաւ եւ Մահմադ Վալի խա
ժողովելով չարագործներու գիտնալուեա
ստուար բազմութիւն, կը յարձակին Հայո
եօթն գլխերու վրայ: Այդ գիւղերն են
Դաշ-բաշի, Վինա, Իսուփու, Քեարման
լու, Միաբիտի, Թաղաբեանտ եւ Նեփեշտ
Յարձակումը տեղի կ'ունենայ առաւօտու
կանուիս, մինչ խեղճ ժողովուրդն առան
ո՛ր և է կասկածի կը պատրաստուէր դրա
ղիլ իւր գործերով: Անպաշտպան ժողո
վուրդը օտարախաչար եղած բարբարոսնե
րու այդ անակնկալ յարձակումըէն, կ'ա
պաստանի տուններու մէջ: Աւօրէններո
կատաղի բազմութիւնը կը յարձակի գիւ
ղերուն վրայ, կը կողոպտէ գոյքն ու ստաց
ուածք, հագուստ, զարդարանք եւ ամէ
ինչ: Միայն Թաղաբեանտ եւ Նեփեշտ
գիւղերէն 1378 գլուխ արջառ կը վերցու
նեն:

Այդ բաւ չէ, ձիերու սմբակի ներքե
չարաչար կը մեռնեն ութնամեայ մի մա
նուկ Բալասան Յօսէփեան անուն: Կ'սկսի
չարչարել այր եւ կին որոյ եւ փայտի հար
ուածներով. թշուառներն, արիւնթաթա
եւ անկենդան կը մնան գետինը: Անոն
դաղանային կրքերու գոհ կ'երթան խեղ
կիններն, որոցմէ երկուքն Մարիամ եւ Հը
ռիփիմէ, ահաբեկ եղած կը վիժեն: Այ
վայրագութիւնը կը շարունակէ ամբողջ
օր եւ այդ գոգաններն լի աւարօք կ
շառնան իրենց տեղերն:

Գժապող հայերն երբ ինքզինքնին կ
գտնեն, սարսափաւոր կը մնան ոչ միայ
եղածէն, այլ նաեւ ապագայէն. ո՞չ ապաքէ
այդ բարբարոսութիւնները կարելի է ո
կրկնուին անմիջապէս: Փրկութեան ուր
միջոց չմնար իրենց, բայց եթէ փախչ
լեռներն, անտառներն և ապաստանիլ բա
րանձաւներու մէջ, անդ՝ ձմրան դժնգա
ժամանակներն ողբալի օրեր անցունել:

Այս գիւղացիներէն երեսուն երեք ան
ձինք կը յաջողին փախչիլ լեռներէն եւ գա
լով Դափքէժ եղելութիւնն հաղորդել Առա
նորդին:

Դավրէժի վրդովումը մեծ կը լինի : Առաջնորդն իւր հետ ունենալով Աղա Սարգիս Յովնանեանցը, կը գիտէ Ամիր Նիզամին որ Ատրպատականի ընդհանուր հրամանատարն է, կը պահանջէ որ չորսգործները ծանրապէս պատժուին ինչպէս նաեւ փոխտրինութիւն լինի Հայոց կրած փնտուց : Ամիր Նիզամին որուն արդարափութեանը վրայ կը խօսուի դովետներով, կը հրամայէ ձերբակալել Ահմատ եւ Մահմուտ խաներն : Հրամանը կը գործադրուի եւ այդ երկու չարագործները կը բերուին ի Դավրէժ, որ կը վայելէ Սադրմուլի—Գառաւոր Ատրպատականի այլակրօն ազգերու—յատուկ խնամքներն ու պաշտպանութիւնն : Առաջնորդը կը բողոքէ ուղղակի առ Վեհ. Դահլիճը ընդդէմ այս անօրինակ մեղաւորութեան քարծրաստիճան պաշտօնէին :

Վեհ. Դահլիճն հրամանն հաղորդելով Սադրմուլիին, Առաջնորդը կը պահանջէ անմիջական գործադրութիւն, բայց Սադրմուլի զանազան պատրուակներով կը ջանայ որ չպատժուին, այլ խնդիրը վերջանայ վերադարձնելով Հայոց ինչ որ կողոպտուած է : Այս լրբենի պատասխանին վրայ Առաջնորդը կրակ կտրած կ'ընէ : «Ձեր այդ առաջարկն հակառակ է արդարութեան, չէրիսթի եւ խղճի, եւ միանգամայն բաժանելութիւն մ'է՛ ոճրագործներուն շարունակել իրենց ասպատակութիւններն եւ եղեռնագործութիւնները : Դուք կ'առաջարկէք վերադարձնել կողոպտուած ապրանքներն, բայց ո՞վ պիտի վերագործնէ իւր ծնողաց խեղճ մանուկն որ ոտնակոխ եղաւ ձերբու, ո՞վ պիտի վերագործնէ բռնաբարեալ հայ կանանց պատիւն, յիշ կանանց տարածամ ընկեցիկ երախտներն : Երբ տեսնենք այդ չարագործ խաներն որ ձեր յարկին ներքեւ պաշտպանութիւն կը վայելեն, փոխանակ չղթայակալ բանտերու մէջ մնալու, ինչ առաւել ուղեք է տալ միմէի այս տխուր իրակառնութեան : Ես՝ ամենախորին յարգանքը եւ երկրազածութեամբ ահաւասիկ անձամբ Ձեզ մատուցի Օգոստոսիտու Դահլիճն հեռագրական հրամանն : Եթէ կը ճանաչէք զայդ իրեւ կայսերական բարձրագոյն հրաման, ուրեմն լը խնդրեմ որ փութով զայդ ի գործ դնէք :»

Այս արդար եւ արի խօսքերուն վրայ, Սադրմուլի կ'սկսի մտաւորութեան մէջ մտնալ շուարած, յազեալ կը պատասխանէ թէ պատժել պիտի տայ յանցաւորներն եւ կատարեալ զոհացում պիտի ստանան Հայերն :

Ստեփաննոս եպիսկոպոսը չբաւականանար այս խոստումներով, դարձեալ կը գիտէ առ Ամիր Նիզամին, կը զրկէ նմա Վեհ. Դահլիճն հեռագրոյ պատճէններն, եւ խտրելով բողոքէ այն տկար միջոցներուն դէմ որով դատաստանն առաջ կը տարուի եւ ոճրագործներն ակնկրեւ պաշտպանութեան կ'արժանանան :

Մինչեւ դեկտեմբեր ամսոյ մէջ տակաւին չէին պատժուած մարդաստան առաջակներն, եւ գոհացում չէր տրուած Հայոց չենք գիտեր թէ կարելի՞ է յուսալ որ յաջորդ թղթաբերները պիտի բերեն գոհացուցիչ լուրեր :

Մշակի Դավրէժի թղթակիցն որ հաղորդած է վերոյիշեալ լուրերն, իւր թերթին, կը յաւելու թէ Պարսկաստանի մէջ սպանութիւններն եւ չարագործութիւններն ո՛չ չափ ունին ո՛չ սահման : Գոհերը միայն հայեր չեն : վերջերս Միքայիլ Մուսղաֆա ըս-

տաններ է, իւր խումբին զլուխ անցած : հինգ թուրք :

Վայրագ մը այդ Միքայիլ Մուսղաֆան որ վար չմնար միւսներէն : Այդ ապիրատն է որ կը յարձակի Նորաշէնի գիւղի վրայ, հասպատակէ զայն, ըստ հնաւանդ սովորութեան կը կողոպտէ, կը բանդէ, թող ծեծերն ու այլ բռնութիւնք : Բայց իւր բոլոր զօրութիւնն ի գործ կը դնէ ընդդէմ Աղա ըստանային : Դարձեալ Առաջնորդը կը գիտէ Ամիր Նիզամին, դարձեալ խոստումներ : Բայց այս միջոցիս Միքայիլ փոխած է—Ո՞ր, այդ չեն ըսեր :

Դարձեալ ինքն : Բայց հարկ կը լինի ամբողջ Մահլը լեցնել :

Գ Ր Ա Դ Ա Տ Ա Կ Ա Ն

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

Ե Ր Կ Ր Ա Չ Ա Փ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի ՊԵՏՈ ՍԶԳՈՅԻՆ ԴՊՐՈՅՈՅ

Երկասիրեաց Հ. Մեսրոպ Սահակեան (Մխիթարեան), — Մասն Ա. Մակարդարաչափութիւն, — Վենետիկ, 1886 :

Հետաքրքիր եմ գիտնալ թէ ինչ պիտի ընէ Ռատմական Խորհրդոյ կողմէն կարգեալ յանձնարարութիւն իրեն ներկայանայ այս գիրքը, ազգային վարժարանաց մէջ գործածելի դասագրոց յանկին մէջ մտնելու համար : Ամիսի նշանաւոր երկրաչափութեան դասագիրքն՝ որ տեսակին մէջ գոհար մ'է՛ Հ. Մեսրոպ Սահակեանի գլխաւոր ուղղիչն եղած է եւ յամի Տետուն 1887ին տխուր տեսնենք հայ յանձնաժողով մը որ Ամիսի հնաւուրց երկրաչափութիւնը ընտելութեան կ'ենթարկէ տեսնելու համար թէ հայ մանկտրոյն ուղեղներու մնասաբեր է թէ օգտակար :

Սակայն մեկի թողով բազմազգիտական նկատումները փութով ուրախութիւն յայտնել այս պատուական դասագրքին համար որ այսօր մեզ կը ներկայանայ, լաւ շարագրութեամբ, լաւ դասակարգութեամբ եւ լաւ տպագրութեամբ : Եթէ գինն ալ, զոր չեմ գիտեր, չափաւոր է՝ կրնանք վստահ ըլլալ թէ օրինաւոր կամ ապօրինաւոր երկրաչափութեան լաւ դասագիրք մը ունինք մեր ազգային վարժարանաց համար :

Այժմ մի միայն մակարդակ երկրաչափութիւնը կը տրուի մեզ, ընդ ամենը 160 էրեսներու մէջ ամփոփեալ : Դատ իսկ է ինձ համար այդքանն եւ բնաւ չեմ փորձիր այն տեսակ դասագրքերէն որք նոր սկսող աշակերտաց յատկացեալ ծովածաւալ հատորներ կը կազմեն : պարունակելով քիչ մը օգտակար նիւթերու հետ շատ մ'ալ անօգուտ եւ աւելորդ խօսքեր որք հեղինակին կարողութիւններն յայտնելու համար են եւ կը յայտնեն նորա դասագիրք չինելու անկարողութիւնը :

Ընդ ամենը չորս գլխոյ բաժանեալ է որոք ամեն մէկը 40 սկան էրես (երկրաչափական ճշգրտութեամբ) : Առաջին գլխոյ կ'երթայ մինչեւ գուգահեռագիծը, երկրորդն՝ բոլորակը, երրորդն՝ համեմատական գիծեր եւ չորրորդն՝ մակարդակ մակերեւոյթից չափն : Եթէ աշակերտ մը լաւ հասկըցած է եւ գիտէ այդ չորս գլխոյներն

ոչինչ կը պակսի նմա մակարդակ երկրաչափութիւնէն եթէ ոչ նոր տեսութիւններն որոնց վրայ խօսք չեմ բանար : Դատ մը խնդիրներ, լուծեալ կամ առաջարկեալ, աստանդ պատշաճ թուով եւ ընարոյթեամբ զետեղեալ են եւ ուսումնական բառից ցուցակ մը կուգայ վերջացնել զիրքը, դիւրութիւն տալով դրուածներն ֆրանսերէն դասագրոց : Հետ բազմապատկու :

Այժմ թող ներուի ինձ մանրամասնութեանց վրայ մի բանի դիտողութիւններ ընել :

Երկրաչափութեան սահմանը այսպէս դրուած է :

1. Երկրաչափութիւնը կը խօսէ մարմնոյ յետը եւ անոց արաքոնութեան շփոնց վրայ :

Երեսուն տող վերջը կը կարդանք :

7. Մարմն է Ժեոմետրիկ մը՝ որ երեք չափ մասնաւոր, երկնային, լայնային եւ բարձրային է : Երեք չափ խորութիւն :

Արդ, կէտերը, գիծերը եւ բոլոր մակարդակ ձեւերը քանի որ մարմին չեն, ինչու որ չունին երկայնութիւն, լայնութիւն եւ բարձրութիւն միանգամայն, ապա ուրեմն երկրաչափութիւնը աւելցնելով վրայ չխօսիր : Եւ այս սահմանը կը տրուի մակարդակութեան մէջ ուր բնաւ մարմնոյ վրայ խօսք չի կայ : Ձեմ գիտեր թէ հ զինակը իւր կողմանէ՞ տուած է թէ հեղինակներէ բաղած, բայց կ'զգամ որ ընտելատելի է այս սահմանը :

Ուրիշ դիտողութիւն մ'ալ ունիմ մի քանի բառերու համար : Ինչո՞ւ համար circumference չըլլայ կ'ըսուի եւ ոչ շրջանակ, ինչո՞ւ համար minute մանրամասն եւ ոչ վայրէջան, ինչո՞ւ համար perimetre պարագիծը լայն եւ ոչ շրջագոյն, ինչո՞ւ համար bissectrice կրկնագիծ, ինչո՞ւ համար probleme — անջարկութիւն եւ ոչ խնդիր եւ այլն :

Յաւ կ'զգամ տեսնելով թէ գիտութեանց այս յառաջագիտ միջոցին մէջ մեր ազգը կատարեալ անխիտանութեան մէջ է բառերու մասին եւ ինչ բառեր : Որքան քիչ գրադեր են մեր նախնիք այնպիսի գիտութիւններով որք իրենց շատ ու շատ ժամանակակից եղած են : Չափազանցութիւնն որ Սրբիմեդէս, Եւրիտէսի որով այս բառերն ունէր, բոլորովին անծանօթ է եղած հին Հայոց եւ այնքան անծանօթ որ նորա անունն անգամ այսօր չունինք : Միմէսմիսի բառին ոմն կ'ընէ չափազանցութիւն, ուրիշ մը չափաբերութիւն, ուրիշ մը օւստիոյթիւն, թերեւս կան ուրիշ անունք ալ զորս ես չեմ լսած : Բայց նիւթ էն կը հիւսանամ : վերջին անգամ կ'ըսեմ՝ շատ ընտիր դասագիրք մ'է այս նոր երկրաչափութիւնն :

Յ ԵՈՒՍՈՒՅՆԱՆ

Ա Ր Չ Ա Գ Ա Ն Բ

Կ. Պոլս, 16 Յունուար :

Պարտա չեն այս չափաւոր ազգային թերթերն : ո՛չ մի խմբագրական երեւցում : հայ թերթերն բոլոր իրենց մտաւորութիւնը նուիրած են Պիղմաքի ճառին ինչպէս յայտնի է, Եւրոպական քաղաքականութեան մէջ վերջին խօսքն հայոցն է :

Պ. Քալանթարեան կը հրատարակէ իւր 10րդ : կրթական յօդուածն Սէ :

«Էլի, մէջ: Այս չարաթուան միակ յօդուածն է որ կը վերաբերի Ազգային կեանքին Բայց յօդուածին առաւելութիւնը միայն այդ չէ: Ինքնին իմաստուն յօդուած մ'է որ ինչպէս միւս յօդուածներն կարգալուարժանի է և գործադրութեան:

Սրբեկան Մանգ Նոյեմբեր և դեկտեմբերի թիւերը միասին եկան: Միութիւնը տկարութիւն է: Նարեգոյ զոհոս, կառուարն արձան, անվանելի Հայրենի, կաթողիկոսական խնդրոյ զայրոյթ, վերջապէս ինչ որ երեք տարի է կը գրէ, կրկնութիւն: Դատ ծերացած է Մամուրեան և Ֆէնտի: Ալ միտքըն այնքան մաշած է որ և ոչ իսկ նորոնոր հայհոյութիւններ կրնայ գտնել, ինքն այդքան վարժ այդ լեզուին: Հիները կրկնելով կը դժանայ:

«Մասիս»ի խնդիրները

Տարի մը Մասիս առաջարկեց խնդիրներ թուարանական որոց լուծումը քիչ շատ գծաւարտութեան բախեցաւ: Բայց վերջապէս լուծողներ գտնուեցան: այժմ առաջարկեց լուծումն այնպիսի գրական խնդիրներու որոց հանդէպ չուարի ամեն ուղիղ բանականութիւն:

«Ահա որ յերկրին Աստորալիանց բնակը այդրենածինը, որոց ազգունը բնակաւորը գաղանթեան օգնեցնեմք մեզի հարգանքը ընդ միմեանս զմտացութիւն մարգոյ և զմարդակերպից: Խառնագանձն: Պողոթնութեան, հանգոյն այնոյիկ զոր եւստես Մարտիրոսն ունի իշխանի ի դաշտին Քոյ Պելոնդեայ, ի չինի ուրեք որ քի վերայ դեռայն Եւրոպայ, թմբի անհանարին տալութեան բերէ յինքեան ընդդառնոյ բարութե» — ՃԱՇԱԿ ՈՍԿԵՂԷՆ Թարգմ. Յ. Կուրգէն:

Այլ բառէ՞. դեռ այս ամենէն հասկանալին է:

Հասկա սա՞. խօսելով ի մասին այն հարատւականութեան որը երեւեցան 1470էն մինչեւ 1500 Եւրոպայի զանազան քաղաքներու մէջ Մատթիոս Էֆ. Գարագաշեան կ'ըսէ, միշտ նոյն ճաշակին մէջ և միշտ մի եւնոյն ճաշակով:

751՝ ի Բարիլ, 530՝ ի Կողմնիս:

Կողմնիս՝, Կողմնիս՝:

Մեր ցաւակցութիւններ այն խեղճ տըղայոց — եւ այն տարաբաղդի վարժապետաց — որք Գարագաշեանի մը աշխարհագրութիւնն ի ձեռին աշխարհագրական բարոյսի մը վրայ Կողմնիս պիտի որոնեն: Ստուգիւ անսպառելի գանձ մ'է այդ ճաշակն, գանձ ծիծաղի:

Նոյն Գարագաշեան Էֆէնտին է որ կը խօսի:

Չառաջնմէն, այն է զձնի գեղէն և զզարգանալոյ Հայ լեզուին, ճառեալ արդարեւ երկայնագոյնս, ի հասանել մեր. ի մտեանս գրութիւն անդր առաջնոյ կիսոյ և. դարուն, առ կարճութեան ժամանակին, զի կատարած տարւոյն մօտ առ կուրծս կայր (մեր ալ շունչն առ կուրծս հասաւ), ստիպեցաք իմն համառօտս հասանել, որպէս յայտնի իսկ ասացեալ է ի վրանս կոյս պատմութեան:

Ըսէ՞ք, կարելի՞ է ծիծաղ զսպել կարգալուարժան գծաւարտ և հաշիւաւոր լե-

զուն: Ինչ մեղքերնիս պահենք, ճշմարիտ է թէ:

Ամեն ծիծաղ ալ չէ գորով

Բայց ընթերցողը զգոյշ կենան իրենք ալ ծիծաղելու: Կ'ըսէ ինչ կ'ըսէ ճաշակն քի ըսկզբան աստ, ի մուտս Բ. շրջանի հանդիսիս:

«Առ այսու ազնիւ քաջալերութեամբ մարթէր մեզ ապաքէն համարել ինչ զըշտեմք տգիտութեան զոր չնչէին ումանք աստ եւանդ, զանհանձար ընդ վայրախօսութեանց ասեմք եւ զպարսաւադիր խճճից, զորս ընթերցող իսկ արժանի առնել չէր մեզ ի գէտ, թող թէ պատասխանոյ»:

Գէթ հայոյութիւններն հասկանալի լեզուաւ ընէին, յօգուտ իրենց:

Ուրիշ հանելուկ

Սեղ — Հայաստանի իւր հրաժարականը կուտայ այս «Վայոց Ձորին» ինչպէս կ'անուանեն, չենք գիտեր ինչո՞ւ, այս աշխարհս ցեախի թառանջն որ կ'արձակէ չէ առ Արեգակն է, և ոչ առ կեանքն, այլ առ Մշակ: Սրմէնեան, կ'իշխայ կը մեռնի Մշակ, Մշակ գոչելով: Բայց այդ դեռ ոչինչ:

Սեղ — Հայաստանի կը յարձակի նաեւ Հրազդանի վրայ որ ըսած էր թէ՛ անկարելի է Արեւելի ընթերցողի մը կարգաւ 19,444,000 տառ մի եւ նոյն ուղղութեամբ, մի եւ նոյն սկզբունքով գրուած. եւ կրնա՞ք գտնել թէ զո՞վ մեղաւոր կը գտնէ, զո՞վ կը գատաւարաւ Սեղ — Հրազդանի այդ դաւանանքին համար: Արեւելի վարչութիւնը, Պուտայ հայերն, Ազգ. ժողովն — Ո՛չ, նոյն իսկ եթէ մէկ տարուան Արեւելեան Մասնաւոր գեւ խոստացուի ամենէն տխմար հայուն, նա անգամ կարող չլինի իրն յատաստանը գտնել:

— Մշակի Խմբագիրը:

Ի՞նչ ինչո՞ւ, այդ գաղտնիքը մեռեալն իւր հետ կը տանի ի գերեզման:

ՕՐԱԳԻՐ

Հոգով. Հայոց Պատրիարքը կը մեկնի քիչ օրէն ի Հռոմ: Այս ամթիւ զրոյցներ կը շարժագայի ի Բերայ: Այլ կարծու՞մ է Ազարեան Պատրիարք չվերադառնար: Այս լուրն հիմնական չերեւիր:

Բայց սա հիմնական է որ Պուտայ Պատական նուիրակութիւնը հաշա աջօք չնայիր Հռոմէական Հայոց Պատրիարքարանին վրայ, եւ զայրոյթ կը տածեն Բերայի լատին եկեղեցականը ընդդէմ Ազարեան պատրիարքին:

Եւրոպայի քաղաքներու ոմանց Պուտայ թղթակցութիւնները կ'ըսեն եւ Ազարեան Պատրիարքի մասին:

Տեղայի թղթակցին նախատելով Պատրիարք Ազարեանը զարմանք կը յայտնէ որ «նորա եկեղեցին» ստացա՞ծ է այնպիսի կարեւորութիւն մը որ բնաւ յարմար չէ նորա վիճակին:

Ամբողջ կայսրութեան մէջ 60,000 կաթողիկ կայ կ'ըսէ թղթակցին եւ անոնցմէ 6,000 ի Պուտայ, որոց կ'առաջնորդ են քիւսէան ճանապարհին մէջ իննսուն քահանայք: «որը չեն փայլիր ոչ իրենց գիտութեամբն եւ ոչ իրենց տառերնութեամբն»:

Կերեւի թէ բաւական չէ կաթողիկ լինել զբաւելու համար կաթողիկ ազգաց համակրութիւնը: Հարկ է դառնալ նաեւ լատին եկեղեցականաց ստորուկներն:

Ռուսիոյ հասարակաց կարծիքն ըստ բաւականին վարանոտ է Պուլկարիոյ նկատմամբ: Ամէն ոք կ'ըմբռնէ թէ «բան մը խորտակուած է» ոյր վերանորոգումն անհնար է: Պահպանողական կուսակցութիւնը, որոյ աեսութեանց համեմատ կը կառավարուի այժմ Ռուսիա, համադրուած կը թուի թէ անհնարին պիտի լինի վերահաստատել ազգակցական կանոն Ռուսիոյ եւ Պուլկարիոյ միջեւ, եթէ դորձերն այսպէս շարունակեն: Նախէ վերէն, պահպանողական կուսակցութեան քլիսաւոր թերթերէն մին, որոյ ազգեցութիւնը մեծ է Ռուսիոյ մէջ, կ'առաջարկէ հաստատել Պուլկարիոյ մէջ Հանրապետութիւն, միակ միջոց, ըստ Նախէ վերէն վերահաստատելու ազգակցական կապը:

«Պէտք է դիտել տալ, կ'ըսէ Նախէ վերէն, որ ի Պուլկարիա հասարակագետութեան մը հաստատման գաղափարը ոչ նոր է ոչ տարօրինակ: Պուլկարիոյ ազատագրութենէ վերջ, երբ Սահմանադրութեան տրուեցաւ Պուլկարիոյ, Մահաթիւս վերահաստատեցաւ Պուլկարիոյ, Մահաթիւս վերահաստատեցաւ Պուլկարիոյ, Մահաթիւս վերահաստատեցաւ Պուլկարիոյ, Մահաթիւս վերահաստատեցաւ Պուլկարիոյ»:

Նախէ վերէն սոյն յօդուածի մէջ կը խոստովանի թէ պուլկարական գահի համար այս կամ այն անձի ընտրութեան խնդիրն աւելորդ և ընդունայն խնդիր մ'է, և թէ Պուլկարիա այսպէս թէ այնպէս, այնու ամենայն մի քանի ամիսներէ ի վերէ կը կառավարուի ի ընդերքն. հետեւաբար նա կարող է կառավարուիլ և ամանց իշխանի:

«Այսպէս խօսելով մենք ի նկատի ունինք Ռուսիոյ շահն. մենք չ'ըմբռնէինք խորհրդէ թէ ո՞րն աւելի շահաւոր է Ռուսիոյ համար. Պուլկարիան իշխանով թէ Պուլկարիա առանց իշխանի: Ռուսիա զով և ընտրելու լինի պուլկարական իշխան, այդ իշխան խիտ գծաւորին կացութեան պիտի դատաւարտուի Ռուսիոյ և Պուլկարական ընդդիմադիր կուսակցութեան միջեւ: Այդ իշխանն եթէ գոհացում տայ Ռուսիոյ պահանջներուն, չախտի կարողանայ գոհացում տալ ընդդիմադիր կողմի պահանջներուն, և ընդհանրապէս: Պուլկարական զարդացեալ դասն հակառակ է Ռուսիոյ, անտարախութեան իրողութիւն մ'է այս, իսկ ժողովուրդն Ռուսիոյ կողմն է, սակայն սա կրաւորական դեր կը կատարէ: Պուլկարիոյ զարդացեալ դասն Պուլկարիոյ անկախութեան կուսակցին է, և Պաղեստինի իշխանն այդ անկախութեան լուսաւոր տառն է նորա համար: Եթէ չ'աջողին վերընարել զՊաղեստինի այն ժամանակի պիտի ջանան ընտրել այնպիսի անձ մը որ տոնէ զՌուսիան: Արդ ո՞ր ընտրեալն կ'արդ պիտի լինի ամբողջով երկու ցեղակից ազգաց կապերն: Մենք կը կարծենք որ ոչ ոք...»

Նախէ վերէն մտանդանիչ ընելէ վերջ այն միտանքն — զոր կրեց Ռուսիա պուլկարական խնդրոյ պատճառաւ — կը յարէ:

«... Խնդիրն հանրապետութեան վրայ չէ, այլ մենք կ'ուզենք որ Պուլկարիոյ մէջ հաստատուի այնպիսի կառավարական վարչութիւն որով Պուլկարիա և Ռուսիա իրարու մերձեանան նախկին բարոյական և արեւնական կապերով. կը վախճանք նմանապէս որ դորձերը կախում չունենան իշխանի անձնաւորութենէն և մինչեւ իսկ այդ անձնաւորութեան անհրաժեշտութիւնը ոչ չընչացնել ասպարէզէն: Եթէ ոչ այս անձնաւորութեան խնդիրներն վաղ թէ ուշ

անպատճառ պատերազմի պիտի մղեն թե-
րեւս այնպիսի ժամանակ երբ պատերազմը
ընտա փափաքելի չլինար լինել մեզ համար
եթէ Պաւլարիոյ մէջ իշխան մը չլինէր
դարձեալ պիտի անցունէինք այս մի և նոյն
տաղնապն, և այս պարագային իրաւացի
է Սեւանուրի ըսելով, Սէն Էջ պաւլարի-
ոյ մէջ Էջնէն Էջնէն . . . ուստի ամէն իշ-
խան կարող է ընել այն ինչ որ Բրաւ Պա-
ղենպերկ, այս պատճառաւ մենք կ'ըսենք
որ խնդիրն իշխանին ընտրութեան վրայ
է, այլ պիտի ջանանք որ Պաւլարիոյ այ-
նուհետեւ կառավարութիւնը առանց իշխա-
նի . . .

«Ուստի իբր միակ հնարք կը մնայ ջա-
նալ հանրապետութիւն հաստատելու Պաւլ-
կարիոյ մէջ, Այս Հանրապետութեան գը-
լտխն, անտարակոյս պիտի լինին համայն
պոլիար ժողովրդեան ճշմարիտ ներկա-
յացուցիչներն և ոչ թէ Պաղենպերկի
ձեռնադրեալները :»

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԴԵՐԱՍԱՆՈՒՅԻՆ(*)

(ՆՈՐԱՎԵՊ)

Զ.

Արեգնալ դժբաղդ էր . մեծ հօրը զըլ-
խուն եկածներն, իրենց ընտանեկան խեղ-
ճութիւնը կը վշտացնէին զնա : Իւր արթը-
րութիւնը կ'աւելնար մտածելով թէ առանց
Յրմոգինէի միջամտութեան զրկուած պիտի
չըլլային իրենց խաղաղիկ կեանքէն : Եւ սա-
կայն անջնջ էր իւր սրտէն Յրմոգինէի յի-
շատակը : Զէր գիտէր թէ ի՞նչ կ'զգար, բայց
կ'ուզէր մտօնն արգարացնել Յրմոգինէն :
Փաստերն զնա արդարացնելու ինքնին կը
ներկայանային . բաւական էր որ արամա-
դրութիւն ունենար զնա արգարացնելու :
Վերջապէս, կ'ըսէր ինքնիրեն, Յրմոգինէ
կատարած է իւր պարտականութիւնը խօ-
սելով ազգային կրթութեան անհրաժեշտ
բարենորոգումներու մասին : Եթէ մեծ հայ-
րըս ծեր է, և ծերութիւնը կը փնտռէ զըն-
դունքի մը յառաջդիմութեան, յանցաւորն
անուշտ Յրմոգինէն չէ : Այսպիսի արա-
մարանութեամբ կը հանդարտեցնէր իւր
սիրտը . բայց արամարանութիւնն ինչպէս
կարող չէ ստուգել սիրահարեալ սիրտ մը,
նոյնպէս կարող չէ լռեցնել խղճի ծայրը :
Արեգնալ ամէն անգամ որ կը նայէր ծե-
րունիին երեսը, դառնութիւն մը կ'զգար
ընդդէմ Յրմոգինէի :

Արեգնալ այսպէս կը ամբարշտէր մի-
մեանց հակառակ զգացումներու և մտա-
ծութիւններու միջեւ : Դէմքին վրայ այլ
եւս չկար խնդութեան նշան մը . աղքա-
տութեան հետեւանքներն, որ քստ օրէ կը
տառապեցնէին զինքը : Սկսեալ մտածել թէ
հարկ էր լռեցնել իրեն հանդիսանալու աշխա-
տիլ, որպէս զի թէ ինքն և թէ մեծ հայրն
այսինքն :

Կուգէր աշխատիլ, բայց ինչ աշխատու-
թիւն ընտրել : Վարձուհի լինելու բնաւ
հակամէտ չէր համբերութիւն ունենալ և
ուսուցանել, այդ իւր կարողութենէն վեր
էր : Այս, ինքն այժմ հանգարտ կ'երեւէր .
վտերն աշխատեալ տնօրինած էին, բայց սր-
տին հաւրը չէր մարած . բորբոքելու համար
առթի մը կ'սպասէր : Եւ յետոյ գիտէր թէ
ինչքան դառնութիւններ պահուած են
նմա որ կ'ուզէ վարձու հի լինել :

Ինչ ընէր, դերձակութիւն . բայց զի-
տէր, Հաղիւ թէ կարող էր քիչ մը կար կա-
րել : Ոչ մայր ճանչցած էր, ոչ մեծ մայր
որ ուսուցանէին իրեն կարել, ձեւել : Այդ
պահուն կ'զգար թէ ինչ աստիճան յոռի
ուղղութիւն մը ունեցած էր իրենց փար-
ժարանը : Գիտէր հայերէն, ֆրանսերէն,
թուրքանոթիւն, պատմութիւն եւայլն,
եւայլն . զիտէր զճաղիւր, և սակայն այդ
ամէնն ուրիշ բանի չէին ծառայել, բայց
եթէ զինքն անօթի պահելու, կամ վար-
ժուհի ընելու, — ենթադրելով թէ զպորցի
մը կամ տան մը մէջ գտնուէր յարմար պա-
տօն մը : Ա՛հ, եթէ լաւ ձեւել եւ կարել
զիտեար :

Երբ կը զեզերէր այս անել ճանապարհին
մէջ, որ մէկ իւր ընկերներէն միայն տունը սե-
սաւ լրագիր մը յորում յօդուած մը կար Օր-
թագիւրի Բարեւոյ ընկերութեան թատրոնի
մասին : Յօդուածագիրը կը գրուատէր թա-
տերական խումբին յայտագրութիւնը, բայց
ցաւ կը յայտնէր որ երկու դերասանուհի
եւ մի դերասան, այդ խումբին փառքն ու
զօրավիճն իրենց ընկերներէն կը բաժնը-
ւէին : Թիֆլիզ կ'երթային դրօշ . արդէն
կ'ընած էին պայմանագիրը, և ցաւէր յօդ-
ուածագիրն որ այդ պատճառաւ կարելի
չլինէր թերեւս արժանաւոր կերպով ներ-
կայացնել այն հնչողակալ ողբերգութիւնը
ձեռնդ հանձնարոյն Յրմոգինէ Էֆի երկ մը,
որոյ կոչումն էր անմահացնել ժԹ դարու
հայ գրականութեան փառքն : Այսու հան-
դերձ, կը յաւելուր յօդուածագիրն, հաս-
տատմամբ տնօրէնն որոշած է անպատճառ
թատերաբեմին վրայ հանել այդ ողբերգի-
կը : Բայց կը կարօտէր դերասաններու
մանաւանդ դերասանուհիներու :

Լայս մը ծագեցաւ Արեգնալի մտօնն
մէջ, չէ՞ր կրնար արդեօք ինքն լինել այդ
դերասանուհիներէն մին . ահա՛ աշխատու-
թիւն մը որ ոչ միայն հաց տխրի տար ի-
րեն, այլ որ լաւագոյնն էր փառք և յետոյ
սրտին մէջ տրոփում մը կ'զգար : Այլ եւս
իւր վառ երեւակայութեամբ օգտալուի զը-
նաւ հրաշալեաց աշխարհին մէջ :

Գերասանուհի ծնած էր այդ աղջկին .
այդ էր իւր կոչումն : Գեռ մանուկ, շատ
անգամ մեծ հօրն հեռ կ'երթար Ալեքի -
փաշայի թատրոնը, ըյտերը, փաշայն զգեստ
ները, թատերաբեմն և դերասանները կը
պատճառէին նմա արտաքին կարգի ցնծու-
թիւն և տունը թատրոն կը խաղար . կը
ժողովէր թաղին իւր հասակաւ ց մանչորն
ու աղջկները, կը ճարէր զգեստներ, սա-
ւանով վարագոյր կը շինէր, փայտի կտոր-
ներէ սուրի անդ կը գործածէր եթէ սեղա-
նի դանակները ձեռք չձգէին ինք կը թա-
ղաւորէր, կը հրամայէր, իրեն կը պահէր
մեծ դերերը :

Մեծ հայրն ալ նպատաւած էր զարդա-
ցնելու իւր թոռան թատերական կոչումն .
գիրքերն, անոր ձեռքը կըդնէր և զերկար-
դացնէր . կուտար առողջ շնչաւորով, Հա-
յոյ պատմութիւն էին, և շատ անգամ
կ'ըսէր «Իրտես քանի տարի առաջ որ Վար-
դանը ներկայացուցին, Արշալը խաղացին,
անոնք եւս» :

Եւ եթէ կոչումն իսկ չունենար, Յրմո-
գինի անունը կը բաւէր այդ կոչումն ստեղ-
ծելու . և նոյն իսկ իւր սրտին տրոփումն
ներն Յրմոգինէի համար ձեռնդ առած էին
իր թատերական կոչումն : Երբ դերասանա-
կան ձեւերը, շինծու ծայրը, լրագրական
փառքն, այդ կեղծ տարերքներն էին որ
վեցին այդ անմեղ աղջկան սիրտը :

Յանդուգն էր Արեգնալ, մտածելով թէ
կարող էր համոզել մեծ հայրն և երթալ

մտնել դերասաններու խմբի մը մէջ . Հին
մարդ էր Պաղտատար պատուելին . կ'ախոր-
ժէր թատրոնէն, կը սիրէր խաղերն, բայց
չէր յարգէր դերասաններն . ունէր նախա-
պաշարումներ ոյր ներքին էին նմա, ուրիշ
դարու մարդ էր :

Բայց ինչո՞ւ խօսը բանալ մեծ հօրն ա-
ռանց նախապէս թատրոնի տնօրէնի հա-
ւանութիւնն առնու : Պատրուակ մը գտաւ
կիրակի օրն եւ միասին առած իրենց Էֆ-
աիկն ելաւ Օրթագիւր գնաց : Կէս օրէն
վերջն էր որ մտաւ թատրոնը . նոյն պիչերը
ներկայացում կար, մեծ շարժում, մեծ ո-
գեւորութիւն թատրոնին մէջ կենդանու-
թիւն առաւ : Արեգնալ, անշարժութիւնը
կը թօթալէր, նոր միջնորդութիւն մը մէջ կ'աղ-
բէր . նոր գէմեր, նոր երկատարողներ տե-
սաւ, և ալ մէկ աչքեր իւր վրայ էին . սի-
րուն դէմքն, անմեղ աչքերն, թաւր երի-
տասարդութիւնը, կը դրաւէին դամենը :
Հաղուց տնօրէն Էֆէնտին, գնաց գտաւ
զայն եւ առանց երկար պարբերութեանց
յայտնեց նմա իւր այցելութեան պատ-
ճառը :

Անվարժ էր, նորեկ էր նա, զայդ կ'ըզ-
գար տնօրէնը, բայց կ'զգար նաեւ թէ ա-
նուշիկ աղբոր աղջիկ մը հրապոյր մ'է միշտ
ժողովրդեան, մանաւանդ այնպիսի ժողո-
վրդի մը որ դերասանական նորութեանց
շատ բնակ չէ . աղջկան մը աղբոր դէմքն
աւելի կ'աղքեն իւր վրայ, քան թէ նորա
դիմաց վրայի հոգեկան արտայայտութիւն-
ներն : Իւր դիտողութիւններն րրաւ տնօ-
րէնը, բայց յայտնեց թէ սիրով կ'ընդունէ
զնա իւր խումբին մէջ, վասն զի ո՛ր եւ է
դերասանուհի վերջապէս սկզբնաւորութիւն
պէտք էր ընել, երկինքէն դերասանուհի
չէր լինար :

— Յարմար եկաւ, բաւա, մեծ հեղինա-
կութիւն մը պիտի ներկայացնենք, Նրմոգի-
նէ Էֆէնտինէն է անուշտ տնօրէնը լաւ
էր : Զեղ գեր մը կուտանք, կարճ բայց աղ-
ւոր, եթէ յաջողիք, ասպարէզիկը բաց է :
Պայմաններու մասին խօսիլ հարկ չէր :
Ինչ պայման կրնար դնել այդ խեղճ տնօ-
րէնը որ իւր երեսուն օմեակներու քա-
ւորդն իսկ լեցնելու դժուարութիւն կը
կրէր : — Ինչ պայման կրնար առաջարկել
այդ դերասանուհին որ կուտար անվարժ և
իր բարիք մը պիտի ընդունէ նոյն իսկ
այդ խումբի մէջ մտնելն : Դ՛մքն, ինչ կը
մտնար հրապոյրաւած արդեւէն զոր պի-
տի կատարէր Յրմոգինէի խաղին մէջ :

Արեգնալ, ուրախութեամբ տնօրէնի
բովէն, աչնան վերջի օրերն էին, պարզ,
զեղեցիկ, օգ մը, և Արեգնալ թեթեւ
սրտով հոգեկարճ զմայմամբ կը բալէր, չէր
ուզէր թրամկէյ նստիլ եւ մտորով կը թռչ-
տէր ապագային մէջ . արդէն շտապեցի կը
դտնէր . այդ ապագայն . ուրախութիւն
մ'ունէր սրտին մէջ սրուն պատճառը չէր
կրնար հասկնալ :

Շատ դժուար էր համոզել ձերուինն որ
թոյլ տայ Արեգնալին երթալ դերասանու-
հի լինիլ . ինչպէս բաժնո էր այդ աղջկէն
որուն երեսը նայելով կը մտնար իւր ցաւ-
երն : Արեգնալն էր իւր ընկերը, ձերու-
թեան ցուպն և յետոյ ստակում . կ'ըզ-
գար թողալ այդ դեռատի աղջկին անոր
անպաշտպան խումբի մը մէջ զոր ինքն իւր
բարկութեան միջոցին կ'անուանէր փոհակ :

Բայց հարկն օրէնքը կը լուծէ . աղբու-
տութիւնը իրենց գուռը տի էր առած,
ձմեռը կը յառաջանար, ոչ մի յուսոյ նշու-
պէտք էր գտնուիլ : Եւ տուաւ իւր հաւա-
նութիւնը, միայն մի քանի ամիսներու հա-
մար, այդ պէտք էր ևս օրոշել, և առա-
ւօտ մը համարեց աղջկան ծակաւն, և
լալով տարաւ զնա չոգեկառը դրաւ Էֆ-
աիկի հետ միասին :

Եւ Արեգնալ ուրախութեամբ կը մեկ-
նէր անտի ուր որ մը պիտի վերադառնար
այցուածքներով :

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

(Շարունակել)

(*) Շարունակութիւն Յունուար 10ի թիւէն.



ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ



ՆՕՐԹ Հ ՊՐԻԹԻՇ ԵՆՏ ՄԵՐԿԱՆԹԻԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

NORTH BRITISH AND MERCANTILE Insurance company

Ի Լոնդոն Լ յ'Եփֆֆֆֆ, Գիշեր 1809

ԴՐԱՄԱԳԼՈՒԻՍ ԱՆՂԼ. ՈՍԿԻ 3,000,000 ՊԱՀԵՍԻ ԴՐԱՄ ԱՆՂԼ. ՈՍԿԻ 5,978,946
ՀԱՍՈՑԹ 1885 տարւոյ ԱՆՂԼ. ՈՍԿԻ 1,788,964

Ն Օ Ր Թ Հ Ր Ր Ն

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

NORTHERN Assurance company

Ի Լոնդոն Լ յ'Եփֆֆֆ, Գիշեր 1836

ԴՐԱՄԱԳԼՈՒԻՍ ԱՆՂԼ. ՈՍԿԻ 3,000,000 ՊԱՀԵՍԻ ԴՐԱՄ ԱՆՂԼ. ՈՍԿԻ 3,131,348
ՀԱՍՈՑԹ 1885 տարւոյ ԱՆՂԼ. ՈՍԿԻ 898,072

Սպանովագրութիւն ընդդէմ հրդեհի եւ կայծակի ի գործ կը դրուին վերոյիշեալ ընկերութեանց միացեալ գործակալութեան ձեռամբ ամէն տեսակ շէնքերու, ապրանքաց եւ կարասեաց վրայ խիստ նպաստաւոր պայմանօք եւ չափաւոր գնով:

Դիւրութիւն եւ կատարեալ ապահովութիւն մեծ գումարներ ապահովագրողաց եւ առատածեւն եւ անմիջական հատուցում վնասուց: Ընկերութեանց երկարատեւ փորձառութիւնն եւ լաւ յարաբերութիւնները հասարակութեան հետ պէտք է դատել սա իրողութեանէն թէ միայն հրդեհի համար իւրեանց հիմնարկութեանն ի վեր տուած վնասման 15,000,000 Անգլ. ոսկին կ'անցնի:

Մ Ա Ր Ի Թ Ա Յ Մ

Մ ՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

MARITIME Insurance Co limited of Liverpool

ԴՐԱՄԱԳԼՈՒԻՍ ԱՆՂԼ. ՈՍԿԻ 500,000 ՊԱՀԵՍԻ ԴՐԱՄ ԱՆՂԼ. ՈՍԿԻ 120,597

Ընկերութիւնն կ'ապահովագրէ շոգեմատուց եւ առագաստամատուց մէջի ապրանքներն եւ դրամածրարներն խիստ օգտակար պայմանաւ:

Գնոց եւ վրայ տեղեկութիւն տուելու ուղղութեամբ, պարտին դիմել Ղալաթիա, Գոմի-սիոն խանի անկիւնը, երկաթէ կամրջին վրայ նայող սենեակն, առ

ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈՒՅԵԱՆ

Գործարար Կ. Պալա Վերջին Երեւան Ընկերութեան:

Գ Ո Ւ Ի Ն

ԱՆԳԼԻՍԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հ Ր Դ Ե Հ Ի Դ Ե Մ

ՐԻԼԱՅԼՆԱ

Մովային ապահովագրութիւն: Դիմել առ գործակալատարն ընկերութեան, Պ. Ժ. Վ. Ուիթոլ, Ուիթոլ, խան Պահչէ - գաբու Պոլիս. կամ Ղալաթիա Մէրթէպանի փողոց Իզդէթ բաշա խան թիւ 6. 507

ԱԶԴ

Ներկայիս պատիւ ունիմ ծանուցանել ԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԺԱՄԱՆ ՄԵԾ. Գործակալ Տեառն, բաժանորդաց եւ ազգայնոց թէ այսօր երկրագործական պաշտօնով յեղիպտոս կը մեկնիմ սակայն պիտի չարուեստեմ Հանդէսն, որ ըստ առաջնոյն իմ խմբագրապետութեան ներքեւ պիտի լինի եւ պիտի հրատարակուի Պէրսիական տպարանէն: Հանդիսիս ընդհանուր գործակալ կարգած եմ զՄԵԾ. Տիմոթէոս Էֆ Պալքեան, ում հարկ է դիմել բաժանորդագրութեան, բաժնեգնոց վճարման եւ խմբագրական աւանկեր կարգի ծանօթութեանց համար: Հանդիսիս եւ Բնական պատմութեան կեդրոնատեղին է Կ. Պոլիս Սուլթան Համամ փողոց գրատուն Զարդարեան եւ ուր ուղղելի են Հանդիսիս եւ Բնական պատմութեան մասին նամակներն ու գրութիւններն յանուն ընդհանուր գործակալի (Տ. Պալքեան):

Ընդհանուր գործակալն ամեն երեքշաբթի կէս օրէն վերջ կեդրոնատեղին կը գտնուի:

Առ Ժամանակեայ ուղղակի հասցէս է
Poste Restante CAIRE
Ն. ՏԱՀԱԻԱՐԵԱՆ

ԱՌԾԻՈՂՍ

Յաճախ կը պատահի որ կուրծքը կը յոգնի ծխախոտի մուխէն եւ չնչափողի խողովակները կը գրգռուին: Այս պարագային մէջ, լաւագոյն բանն է ՆԻԲՈՍԻՑԻ բաղադրիլ մը առնուլ մէն մի գլանիկէ յետոյ:

Այս հեշտահամ շաքարահատը կը զովացնէ չնչառութիւնը, կը մեղմէ խողովակաց ցաւերն եւ բարերար ազդեցութիւն մ'ի գործ դնէ, որովհետեւ կը պարունակէ ծխախոտին դեղութիւնը եւ կը ջնջէն անոր վնասակար ազդեցութիւնները:

Ներքոյի Բաղադրիլի տուիւնը կը ծախուին ի գին 4 դրուշ, կը գտնուին ամեն լաւ դեղատանց մէջ, Ընդհանուր կեդրոնատեղին է Դեղագործական Մըթերանոցն. Ղալաթիա մեծ փողոց թիւ 35 (Կայարան Թրամուէից):

ԻՐԱՏ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Ամեն անոնք որ կ'ուզեն ձեռք բերել այն օտար դեղագործական մասնագիտութիւն, ներն զորս չեն կարող գտնել իրենց դեղափաճառին ըով, կրնան դիմել Դեղագործական Մէթերանոցն ի Կ. Պոլիս, Ղալաթիոյ մեծ փողոց, 35: Առաքումը կը լինի փոստայով, նոյն իսկ մէկ սրուակի կամ տուփի համար, եթէ խնդրանքին հետ զրկուի փոխարժէքն եւ դեղին ճիշդ անունը: Պէտք է յատկապէս զրեւ ուղղին անունն եւ հասցէն:

Ը Ն Թ Ա Յ Ք

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏԱ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

Ա. ՏԱՐԻ

Գործ Թարգման Յ. Պէյապեան:

Յարդ հրապարակ ելած աշխարհագրական դասագրքերը, թէեւ իւրաքանչիւրն ունին իրենց յատուկ առաւելութիւններ, սակայն ամենքն ալ մէկ տարւոյ համար պատրաստուած ըլլալով աշխարհագրութեան դասախօս մը կ'ստիպուի կամ միեւնոյն դասագիրքն իւր դասախօսութեան յանձնուած երկու երեք եւ երբեմն աւելի կարգաց համար միանգամայն գործածելի ընել, որ մեծ անպատեհութիւն մ'է, եւ կամ ընդլայնելով կամ համառօտելով գրաւորապէս դաս առանդել, որ քիչ աշխատութիւն է:

Այս անպատեհութեան առաջին տունելու եւ պատ. դասախօսաց դիւրութիւն մ'ընծայելու նպատակաւ պատրաստուած է այն Բաղադրիլ Աշխարհագրութեան ընթացքն, չորս տարիի վրայ բաժնուած եւ մին քան զմիւսն աւելի ճոխ եւ աւելի ընդարձակ:

Ա. տարին, որ խիստ պարզ եւ հակիրճ պարբերութեամբ դիւրահասկնալի ըզու մ'ընելի այս անգամ լոյս տեսած է Պաղտատեան տպարանէն եւ կը ծախուի ամեն գրադաճառաց ըով:

Գին 2 դրշ:

2-10

ՏՈՒԹՈՐ ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

ՏՈՒԹՈՐ ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ, որ քանի մը տարիներէ ի վեր յԱդրիանուպոլիս հաստատուած, եւ վերջերս ալ ի վիճէնա գընացած էր, վերադարձած լինելով ի Կ. Պոլիս, այժմ իւր բնակութիւնն հաստատած է ի Պոյաճը դիւղ, Գորու ճատտէսի, երրորդ փողոց, թիւ 22 սուրը, ուր կ'ըզարմանէ իրեն դիմող հիւանդները: Նաեւ, ամեն օր, ժամ 7 էն 9, կը գտնուի Կ. Պոլիս Սուլթան Մահմուտի Թիւրպէին դէմ, Էմիրդէեան Համրիկ Էֆէնտիի դեղարանն ուր հինգշաբթի օրերը ձրիապէս կը դարմանէ իրեն դիմող աղքատ հիւանդներն: Երեքշաբթի եւ ուրբաթ օրերն ալ, ժամ 9 էն 10, կը գտնուի Ենի-ճամի, Բոսթային դէմ, Կ. Վարդանեան Էֆէնտիի Նիւ-Եորք դեղարանը:

Սըրտնատէր Կ. Ս. ԻԹԻԻԻԶԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻԻ ԻՐԱԳՐՈՒ